Միաթ (մուննաթ) պարտաւորուել  
մէկի առաջ, երեխաների  
մնալ.  
Մնէն — նորան, նորանից.  
Մուրու — խորթ՝ մայր,  
Մրազ — իղձ, նպատակ.  
Մօ, տ. մա, տ. մատ — մօտ.  
Մօխսացաւ — մօտեցաւ.  
**Յ.**  
Յաբով — աբով — պատճառով.

## ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Յախպիւր-նիր - աղբիւր-ներ.  
Յերելը - երեկուան.

Յեղին - սենեակ, օդաց.

Յիւր, յիւրի - նուր, նուր է.

Յէշունց էտու - հայհոյեց.

Յիբ - երբ.

Յիլա էնել - կեղծել, խաբել.

Յիոջիւ - առաջ.

Յիտ' ւ - յետոյ, յետևից.

Յիւր - նուր, ինչու.

Յիշ - ուրիշ

Յիւրիւր - իրար, միմի անց.

- Խտու յիւրիւր - իրար ձգեց, հաւաքեց միամին.

Յրեովկիւ } ուղարկել

Ն.

Նալ - պայտ.

Նալբանդ - պայտառ.

Նամամիւրին - բանսարկութիւն,  
դաւաճանութիւն.

Նայիր, նայիւր-քիր - ծառաց.

Նենիր - որս.

Ներիզ խամշար - դաշոյնի մի  
տեսակը.

Նիտ - նետ.

Նիտ անեղ - նետ և աղեղ

Նուր - նոր.

Նոբար - հերթ, կարգ,

Նմուշ - գէմք, երես.

Ը.

Ծախսիլ - պահել, սնուցանել

Ծանգառի, ժանգառի - կապոյտ.

Ծանք տալ - ցոյց տալ.

- Էնու պերան կուտրէր, ինչ քի  
շանք ի տուի

Ծիքիլ - պատկեր, դէմք.

Ծլկից - սարքեց կարգաւորեց

Ծիրիկ - ընկեր, մասնակից

- Քրթիճիւ շիրիկ - հացի մաս-  
նակից, կին?

Քիքիլ } ա շէք' լ

Քիքիլար } ա շէք' լ  
Հոււաբանդ - լուսամուտ ապակիւ-  
ներով.

Քիւր } հաղուստ.

Քիւտ - շուտ.

Ա.

Ումուդ - յոյս

Ումր - կեանք.

Ունչ - ինչ.

Ուր - լուր.

Ուրդու - բանակ.

Ոքիր - ոտքեր.

2.

Զադր - զրան

Զախ - ժամանակ.

- չուր էն չախ մինչև այն ժա-  
մանակ.

- էն յախից եփու - այն ժամա-  
նակից յետոյ

Զախու - դանակ, սուր,

Զայիր - մարգագետին.

Զեփդ - տեսակ, նման.

Զիոյ - ապա թէ ոչ.

Զուր - մը նչե.

Զիլախ - մերկ.

Զօլ - անբնակ դաշտ, անապատ

Պ.

Պագնից համբուրեց.

Պախից պահեց.

Պայա - հետիոտն.

Պեախ բահ, փորելու գործիք

Պեան - բան, գործ.

- պեան քենչ չի կեայ - քեղնից

բան չի գուրս գալ, չես կա-

րող գործ կատարել.

- Վըր պեանիմ կապել - մի հնար  
գտնել, մի գործով կապել,  
զբաղեցնել.

Պզտիկ - փոքր.

Պըւեռ պըւընիր - բւեռ, մեխ.

Պի - բէր (բերել)

Պիւլիւր - բոլոր, շուրջ.

Պիւռ - բուռն, սրի կոթ, բունե-  
լու տեղը.

Պկեր - պէտք, հարկաւոր.

- Ազգմթին պկեր կ'կեսս - ծա-  
ռայութեան պէտք կգաս.

Պըջաւ - աներեւութացաւ.

Պոնաւուր - բանտարկեալ, բանտ.

Ջ.

Ջամ - ապակի.

Ջաւահիր - ակունք, գոհար.

Ջէբ - դրապան.

Ջրւան - քուռակ.

Ջիւդի - զոյգ, ջուխտ.

Ջիաբ - լուր, պատասխան.

- Ջհար չինք կէրի տայ - սլա-  
տասխան չենք կարող տալ.

Ջոհաբ, ջուաբ տ ջհաբ.

Ջ.

Փաստ էկան - հանդիպեցան

Փեանգ - գոյն.

Փրեբ - ասպանդակ.

Փոժի - սև.

Փուսպի - անառակ, անբարոյական - Եօթ տաբաղէն զետնի տակ  
մտնիս.

Ո.

Սադաղէն - կարողութիւն.

Սահրանգէ - մարգագետի.

Սամախոր - երկաթ, երկաթի ձող.

Սայիսիս-ֆիր - ձիապան.

Սայա - շնորհ, հովանի.

Սանդուղ - սնդուկ.

Սարխուռ - արքած, արքեցած.

Սեախարկ - յաշմանդամ.

Տալ - դեռ ևս.

Տակ վիրիւ էնիլ } քանդել,

Տակ տիրիւ էնիլ } կործանել.

Տամահուրին - ագահութիւն.

Տամահիւար - ագահ

Տապկից - տապակ արաւ, երկու  
մաս արաւ և.

Տափալ, տըփըլ—երեխայ.

Տեռու, տիւռ—դուռ.

Տեղ—երկիր,

— իրանայ տեղ—իրանայ երկիր.

Տեսակով—գեղեցիկ կերպարանքով.

Տէմաց—դէմ, յանդիման.

— էն տէմով—այն մտքով, տեսակէտով.

Տըսւերկու—տասներկու.

Տը } պէտք է, «կը», ապառնի

Տի } մասնիկը

Տի—դրեց

Տիր ըմ—մի անգամ.

Տիրկեաւան—նետ անեղ.

Տիւ—դու. (դերանուն)

Տիւռ—դուռ.

Տղէտներ—տղաներ.

Տօն—տուն.

Տփեց—խփեց, զարկեց, ծեծեց.

Փ.

Փալաւան } փալաւան, քաջ տը-

Փալիւան } դամարդ.

Փանջարայ—լուսամուտ.

Փուխ—փոխ, փոխարէն.

Փունթ—ծալք.

Փուր—փոր.

— Փուր առից գետըն—փորը  
գետնին կպաւ.

Ք

Քարբայ—գրագիր, գիր անող:

Քեալիր ձի—նժոյգ.

Քանց աստղ յերկնուց—երկնքի

աստղերի չափ.

Քե—քեղ.

Քեամակ—մշջք, թիկունք.

Քեամանդ—պարան, թոկ.

Քենէ—քենմից.

— քենէ գիտիմ—քեն տեսնեմ.

Քեռչ, քեռչիր—ծունկ, ծնկներ.

Քէֆ—գրօսանք, ուրախութիւն.

— ուրինց քէֆն ի,—կամքն է.

Քի—քեղ.

Խատ քի—քեղ հետ.

Քիւ—քո.

Քիւս—քոս?

Օ.

Օլոււաղ—կին, կանացի սեռը

ընդհանրապէս.

Օմր—կեանք.

Օրդում—բանակ.

Օրքախ—ընկեր.

Ֆ.

Փերիզ—հոկայ, քաջ մարդ

## Ո Ո Ս Ա Մ Չ Ա Լ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ<sup>1)</sup>

(Մոկաց բարբառով)

Գրի տուաւ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԻ ՅՈՎԱԿԻՓԵՍՆ

ԱԽՍԾԾԾ ՋԱԼԻ ԺԱԳԹԻՄՆ ՈՒ ՆՅԵՆՑԵՈՒԹԻՒՆԻ

1.

Ազգերի զբացիութիւնից բղիւել է միշտ նոցա փոխադարձ,  
հողերը ազգեցութիւնը: Հայերը զբացի լինելով Պարսից՝ ենթար-  
կուել են նոցա քաղաքակրթութեան. զրադաշտական կրօնի հետ-  
կուել են նոցա քաղաքակրթութեան հայերի զիցարանութեան,  
քերը նկատելի են ոչ միայն հեթանոս հայերի զիցարանութեան մէջ: Պարսից  
այլ և քրիստոնէական շրջանի մատենագրութեան մէջ: Պարսից  
ազգուի և քրականութեան ազգեցութիւնը տեսնում ենք նաև միշ-  
լիկուի և քրականութեան ազգեցութիւնը: Այս փոխադարձ ազգեցութեան ար-  
և ազգարեան Տաղարաններում: Այս փոխադարձ ազգեցութեան շահ-  
նակի մէջ է մտնում և ժողովրդական բանահիւսութիւնը:

Պարսից ազգային զիցարաներգութիւնը սիրելի էր Հայերին  
գեռ և Խորենացու ժամանակներից. պատմութեան նախահայրն  
պատիպուած էր բաւականութիւն տալ իւր մեկենաս Սահակ Բագ-  
րատունու հետաքրքրութեան՝ առաջին գրքի վերջում բացատրելով  
բատունու հետաքրքրութեան՝ առաջին գրքի վերջում բացատրելով  
բիւրասպ Աժգահակի (Զոհակի) առասպեկլը<sup>2)</sup>: Հայերի ծանօթու-  
թիւնը Պարսից առասպեկների և զիցարաներգութեան հետ՝ պէտք  
թիւնը Պարսից առասպեկների փիցարաներգութեան համար յա-  
է բացատրել երկու զբացի ժողովրդի փոխադարձ, կենդանի յա-

<sup>1)</sup> Տես Ազգ. չանգէս VII—VIII գլուխ.

<sup>2)</sup> Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիվիս, 1881, հ. 95—98.

ըաբերութեամբ և միանգամայն անկախ գրաւոր յիշատակարաններից: Որովհետև Խորենացին որ դարու հեղինակ էլ ընդունելու վնինք, աւելի վաղ էր ապրում, քան Ֆիրդուսին, իսկ Զ. և Ե. դարերում արքէն գրի առնուած Պարսից առասպելների յիշատակարանների և Խորենացու մէջ որևէ առնչութիւն զժուար է ընդունել: Կարեք չունէր պատմահայրը թագանել իւր աղբիւրը, մանաւանդ որ նրա և պարսից յիշատակարաններից հասած համապատասխան առասպելի մէջ տարբերութիւն կայ: Մեզ մնում է ընդունել, որ նոքա բերանացի պատմւում էին ժողովրդի մէջ և Խորենացին օգտուել է այնպէս, ինչպէս օգտուել է հայոց ժողովրդական առասպելներից:

2.

Արդեօք Հայ ժողովրդի յիշողութիւնից իսպառ անհետացել է Պարսից առասպելների բովանդակութիւնը: Այս հարցին պատասխանելու համար, հարկաւոր է աւելի հիմնաւոր և մասնագիտական ծանօթութիւն Պարսից մատենագրութեան և նոյն իսկ հայ ժողովրդական բանահիւսութեան հետ, քան մենք ունինք: Ո՞րքան բազմաթիւ հէքիաթներ, վէպեր զեռ ևս անծանօթ են մեր բանասէրներին, գրի առնուած Շլինելու պատճառով. մի քանի տարի առաջ էր նոյն իսկ, թէ ժողովրդական հրաշալի վիպական երգեր ունինք, կամ պարսից գիւղազներգութեան այլ և այլ հատուածները տարբեր վարիանտներով և բարբառներով պատմում է մեր ժողովուրդը: Գուցէ նորաներ զիւտեր այս խընդիրը աւելի կ'պարզեն, յամենայն գէպս ուշադրութեան արժանի է և հաւանօրէն նուութեան կնիք է կրում այն հանգամանքը, որ ժողովրդի հասկացողութեամբ Պարսից և Հայոց վէպերի հէրոսները ցեղակից են գուրս գալիս: Գրաւոր յիշատակարաններից առնուած աւանդութիւններն ու առասպելները զժուար կարծ ժամանակում այն չափով կերպարանափոխ լինէին ժողովրդի յիշողութեան մէջ, որ հէրոսների ծագման և հայրենիքի գաղափարներն իսպառ փոխուէին կամ շփոթուէին: Պարսից վէպի հէրոսների և մեր Սասմայ ծուրի ցեղակցութեան մասին տեղեկացել էինք զեռ ևս 1890 թուին Ապարանի Թաքարլու գիւղում աղքագրական նպատակով կատարած ձանապարհորդութեան ժամանակ և 1899 թ. «Արարատ»-ի փետրուարի տետրակում մի ծանօթութեան մէջ տեղեկութիւն յայտնել, բայց աւելի մանրամասնութիւններ իմացանք պ. Բագրատ Խալաթեանի «Իրանի հերոս-

ները հայ ժողովրդի մէջ»\*) գրքի հրատարակութեամբ: «Բուրզէ» վերնագրով (եր. 24) վիպական հատուածի մէջ Զալը Սասում քաղաքի թագաւորն է, Դաւթիթ Զալի եղբայրը, Բուրզէն Դաւթիթի որդին. Բուրզէի հօրեղբայրն է Յովան, որ երբեմն նաև Զէնով-Յովան (եր. 56) է կոչւում, իսկ Ծոստամբը Զալի եղբայրը (եր. 36): Վան (եր. 56) է կոչւում, իսկ Ծոստամբը Զալի եղբայրը (եր. 36): Սասման ծուերի և յատկապէս Զէնով-Յովանի բարձր ձայնով բոռալու յատկութիւնն ունին նաև պարսիկներից մեզ անցած վէպի հերոսները Ռոստամ (եր. 37) և Բուրզէ (եր. 38): Զալը և Զմրութ-Ղուշը որ դեր է կատարում ոչ միայն Պարսից վէպի, այլ և մեր հէքիաթների մէջ, երգուում են մեր վէպի հերոսների երգման ձևով. «Խացն ի մինին, աէլ կենդանին» (եր. 37); Այս բոլոր հերոսների հայրեգինին, աէլ կենդանին» (եր. 37); Այս բոլոր հերոսների հայրեգինին, և նոքա այսակել ես, ինչպէս և մեր աղքային նիքը Սասունն է, և նոքա այսակել ես, ինչպէս և մեր աղքային վէպի մէջ, օտարների աշբում կոչւում են «Սասման ծուեր (եր. 25): Վի ուրիշ հատուածի մէջ՝ «Ռոստամի Զալ» վերնագրով, որ պ. Մի ուրիշ հատուածի մէջ՝ Ապարանի Զամբլու գիւղում, Ռոստամի կրեն Սասունի է (եր. 74) անուանում և Կարմիր Դեկից յափշտական Սասուն տանում (եր. 76): Այսպիսով տեսնում ենք, կած տւարը Սասուն տանում (եր. 76): Այսպիսով տեսնում ենք, որ պարսից վէպի հերոսները հայցած են և աղքակցական նեղ ու պարսից վէպի հերոսները հայցած են և աղքակցական նեղ մի երեկով միացած մեր աղքային վէպի հերոսների հետ, մի երեկով միացած մեր աղքային վէպի հերոսների համարում կերպով ծանօթացնել ընթերցողներին: Յէ-համարում համառու կերպով ծանօթացնել յատկապէս զակից աղքերի մէջ ժողովրդական բանահիւսութեան, յատկապէս վիպական ստեղծագործութիւնների, փոխառութիւնը բացառիկ վիպական տեսակից վէպերը շատ մեծ կազ և նմաներոյթ չէ. գերմանական ցեղերի վէպերը շատ մեծ կազ և նմաներոյթ ունին միմեանց հետ: Այդ նմանութիւնը բացարւում է նութիւն ունին միմեանց հետ: Այդ նմանութիւնը բացարւում է երեք տեսակէտով. առաջին՝ ցեղակից աղքերի մէջ որոշ տարրեր, մանաւանդ վիցարանական պատկերներ և կրօնական հաւատալիք-մանաւանդ վիցարանական պատկերներ և համար զեռ ևս սրանց բաժաներ, ընդհանուր են եղել բոլորի համար զեռ ևս սրանց վէնումից առաջ և այդ տարրերն արտացայտուած ենք զանում վէնումից մէջ: Երկրորդ՝ նմանութիւնների մի մասը բացարւում է պի մէջ: Երկրորդ՝ նմանութիւնների միացացման օրէնքների միամարդկային հոգու մատածողութեան և զարգացման իմաստութիւնների իմացանք պ. Բագրատ Խալաթեանի «Իրանի հերոս-

3.

Փոքր ինչ տարրեր, բայց այլ տեսակէտով գարձեալ մի շատ կարենը երեսոյթ նկատում ենք Ռուսաց ժողովրդական բանահիւսութեան մէջ, որ իբրի լուսաբանութիւն, հարկ ենք համարում սութեան միացած մեր աղքային վէպի հերոսների հետ, մի երեկով միացած մեր աղքային վէպի հերոսների համարում կերպով ծանօթացնել ընթերցողներին: Յէ-համարում համառու կերպով ծանօթացնել յատկապէս զակից աղքերի մէջ ժողովրդական բանահիւսութեան, յատկապէս վիպական ստեղծագործութիւնների, փոխառութիւնը բացառիկ վիպական տեսակից վէպերը շատ մեծ կազ և նմաներոյթ չէ. գերմանական ցեղերի վէպերը շատ մեծ կազ և նմաներոյթ ունին միմեանց հետ: Այդ նմանութիւնը բացարւում է նութիւն ունին միմեանց հետ: Այդ նմանութիւնը բացարւում է երեք տեսակէտով. առաջին՝ ցեղակից աղքերի մէջ որոշ տարրեր, մանաւանդ վիցարանական պատկերներ և կրօնական հաւատալիք-մանաւանդ վիցարանական պատկերներ և համար զեռ ևս սրանց բաժաներ, ընդհանուր են եղել բոլորի համար զեռ ևս սրանց վէնումից առաջ և այդ տարրերն արտացայտուած ենք զանում վէնումից մէջ: Երկրորդ՝ նմանութիւնների մի մասը բացարւում է պի մէջ: Երկրորդ՝ նմանութիւնների միացացման օրէնքների միամարդկային հոգու մատածողութեան և զարգացման իմաստութիւնների իմացանք պ. Բագրատ Խալաթեանի «Իրանի հերոս-

\*) Պարփ, 1901 թ.

տեսակութեամբ և երրորդ՝ փոխառութեամբ։ Այս երրորդ տեսակին է պատկանում Ռուսաց Երուսաղման Լազարեվիչի վեպը, որ Ժէ. Դարու մի ձեռագրից հրատարակել է Ն. Ի. Կաստամարով Պայտ-նիկ ստարинной русской литературы հրատարակութեան բ. պլ-րակում։ Սոյն վեպի մի ուրիշ վարիանու և աւելի պակաս աղճա-տուած՝ դարձեալ Ժէ. Դարու ձեռագրից, հրատարակել է Վ. Մ. Ռենդոլից Ռետոնից Русской Литературы и древности II հատու-րում, 1851 թ., Վ. Վ. Վլիմարով հերոսը Որուսաց Լազարևիչն է, որ ոչ այլ ոք է, եթէ ոչ Շահնամէի Բոստամ Զալ-Զերը. վեպի միւս անուններն էլ համապատասխան են Շահ-Նամէի մէջ յիշուած Երկրորդական անուններին։ Ռերուսան գործում է Կիրկուուս Կիր-կողանովիչ թագաւորի ժամանակ. նրա վլիմարով թշնամին Դանիիլ Բէլին է, Ռերուսանի ձին կոչուած է Արաշ։ Հստ Ստասովի Կիր-կուուս Շահ-Նամէի Կաւ-Կաւոսն է, նորա հայրը Կիրկողան՝ Կաւ-Կորադ, Դանիիլ Բէլից համապատասխան է Սպիտակ Դեկին, ձին Արաշը Բախչին, իսկ Ռերուսանը՝ Ռուստեմին։ Օրեստ Միլ-լեր իւր ընդարձակ աշխատութեան մէջ՝ Ալյա Մորոմեց և Եօգայրեւ Կիևսкое, С. Պетерբորց, 1869 եր 43—49 մէջ բե-րելով վերոյիշեալը, որից օգտաւում ենք և մենք, աւելացնուած է, որ թէկ լեզուաբանօրէն Ռերուսան համապատասխան չէ Ռուսամ անուան, բայց հաւանօրէն խառնուած է թաթիարական Արսան անուան հետ, և հետպհետէ փոփոխուելով՝ Ռերուսան անուան է յառաջ եկել։ Անունների այսպիսի զուգագիպութեան հետ բովան-դակութրան աշըքի ընկնող նմանութիւնը, պատմուած երբեմն նոյն իսկ նման հետեղականութեամբ, պարզ ցոյց է աւլիս, որ այս վեպը փոխառութիւն է Շահ-Նամէից, չնայելով տարբերութիւն-ներ ևս կան։

4

Այսպիսի մի փոխառութիւն է Շահ-Նամէից նաև մեր զբի  
առած Խոստամ-Զալը. որպէս ապացոյց այստեղ ևս կարող ենք  
յիշել ոչ միայն անունների և բովանդակութիւնն, այլ և յաճախ  
գէպքերի հետևողականութիւնն նմանութիւնը: Ի՞նչ ճանապարհ-  
ներով է Շահ-Նամէի բովանդակութիւնն անցել մեր ժողովրդին,  
չենք կարող ասել, արդիօք Շահ-Նամէի ընթերցանութիւնն ժա-  
մանակ ժողովրդն ունինդիր է եղել, թէ ընթերցողներն իրենք  
պատմել են ժողովրդին: Զգիտենք: Կարող է պատահել նաև, որ  
Հայերը Քրդերից իւրացրած լինին, քանի որ նրանց մէջ ևս  
պատմում է այս վէպը քրդերէն լեզուով:

ևս դժուարանում է, երբ յլիշենք, որ մեր ժողովրդի մէջ ունինք նոյն վէպի այլ և այլ հատուածներ, որոնք միանգամայն տարրեր են Շահ-Նամէի համապատասխան մասերից <sup>1)</sup>: Ինչպէս և իցէ, ժողովուրդը իւրացնելով Շահ-Նամէի որոշ մասերի բովանդակութիւնն, ինքն հիւսել, մի նոր վէպ է կազմել: Մեր գրի առած «Ռուսամ-ինքն հիւսել, մի նոր վէպ է կազմել: Մեր գրի առած «Ռուսամ-Զալ» վերնագրով վէպի մէջ պատմուած են միայն Կաւ-Կորպադի, Կաւ-Կաւուսի և Սիալուշի հատուածները մինչև Կաւ-Խոսրովի թագաւորութեան սկիզբը, բայց շատ տարրեր եղանակով, հիւսուածքներով և կապակցութեամբ, քան Ֆիրդուսու Շահ-Նամէի մէջ: Այստեղ պակասում են բնականաբար նախ հերոսների ընդգարձակ նամակագրութիւններն ու բանախօսութիւնները, որոնք աւելի բանաստեղծի երեակայութեան և ստեղծագործութեան արդիւնք են, քան ըուն, ժողովրդական վէպի մասեր: Փոխառութիւնը կատարուած է միայն էական, ըուն վիպական մասերով, յաճախ աղբիւրի պատմածքից տարրեր կազմութեամբ, հայեացքներով և շարայալութեամբ: Մի հատուած, որ Շահ-Նամէի մէջ ուրիշ կաշակցութեան մէջ է պատմուած, այստեղ միացած է բոլորովին այլ պատմութեան կամ հատուածի հետ: Ուրիշ կերպ էլ սպասել չէինք կարող. ժողովուրդն իւր ստացած նիւթը կրծատել կամ աւելացրել, փոփոխել և դասաւորել է իւր հայեացքների, ճաշակի և գեղարուեստական հակումների համեմատ: Յիշողութեան շփոթութիւնն էլ անշտաշտ իւր գերն է կատարել:

կարգալով ֆիրզուսու ՇահՆամէն, ընթերցողը սպասուած է,  
որ այդ գիւղազներգութիւնը ներկայ կազմութիւնամբ, որքան և  
ժողովրդական իւր ընդարձակ նւթով և հիմնական գաղափար-  
ներով, գեղեցկութիւն և կենդանութիւն է ստացել բանաստեղծի  
երեակայութեան և ստեղծագործող տաղանդի շնորհիւ. հերոսների  
այնպիսի ընդարձակ ատենաբանութիւններ և նամակագրութիւն-  
ներ, ինչպիսների, երբեմն և բնութեան տեսաբանների նկարագ-  
րութիւններ, կեանքի անցաւորութեան մասին փիլիսոփայական  
դատողութիւններ ուրիշ ազգերի բուն ժողովրդական բանահիւսու-  
թեան մէջ չենք գտնում: Արեւելեան և արեմտեան ազգերի ժո-  
ղովրդական վէպերին յատուկ է հօր և որդու մենամարտութեան  
միջնադէպը, ըայց մը ազգի վէպի մէջ պատմութիւնն այնպիսի  
զօրեն ողբերգական-ճակատագրական բնաւորութիւն է ստանում,  
ինչպէս Ֆիրզուսու Զոհրաբ հատուածի մէջ: Այն ինչ Ռոստամ-  
Զալի մէջ ամենայն ինչ անարուեստ է, պարզ. հէնց այդ պար-  
զութեամբ էլ գեղեցիկ է և ժողովրդական:

1) Տես մեր զէպի Ե. և Զ. զլուկները և Բ. Խալթեանի իրատի շնորհածը  
Հայ ժողովրդի մէջ, Պատիս 1901

Ըստամ-Զալի նիւթը, թէև փոխառութիւն է Շահ-Նամէից, բայց ժողովուրդը իւրացրել է այն իւր հոգու պահանջներին համապատասխան չափերով և վերարտադրել հիւսել բուն ժողովը դական, վիպական ձևերով և հայեացքներով։ Հայ ժողովդի երևակայութիւնն ու ստեղծագործող հոգին իւր զրոշմն է կնքել ծագումով օտար այս վէպի վերայ. Նա է սաելծէլ այն կենդանի, հակիրճ, բայց զօրաւոր արտայատութիւններով վիպական լեզուն, որ հրձուանք կարող է պատճառել ժողովրդական բանահիւսութեան մասին ճաշակ և հասկացողութեան ունեցող ընթերցողին։ Լեզուի կենդանութեան, պատկերաւոր արտայատութիւնների, բուն վիպական նկարագրութիւնների և ժողովրդական հայեացքների արտայացտութեան կողմից մեր ազգային բանահիւսութեան գեղեցիկ ստեղծագործութեաններից մէկը պիտի համարել այս վէպը, թէև կմախքն օտարինն է։

5

Ըստամ-Զալի և Շահ-Նամէի համապատասխան մասերի համառության բովանդակութեան համեմատութիւնը աւելի կ'զարդէ նոցա մէջ եղած առնչութեան չափը։ Ի՞նչպէս յիշեցինք Ըստամ-Զալը։ Շահ-Նամէի ամբողջութեան ամփոփումն չէ, այստեղ պատմուած են միայն Կաւ-Կորազի, Կաւ-Կաւուսի և Սիավուշի վէպերը մինչև Կաւ-Խոսրովի թագաւորութեան սկիզբը, բայց ոչ համապատասխան բոլոր մասերով. Կաւ-Կաւուսի Մազանդարան գնալու և Ըստամի եօթն արկածների մասին ակնարկութիւն անզամ չ'կայ։ Այս բոլորի մէջ կերպնական անձնաւորութիւնը Ըստամն է, միւսների անունն ու գործերը յիշուած են, կարծես, միայն հերոսի պատկերն աւելի պայծառացնելու համար, ուստի և իրաւամբ այդ վէպը Ըստամի անունն է կրում ժողովրդի մէջ։ Հենց այս հանգամանքն ինքնըստինքեան մի շեղումն է Շահ-Նամէից։

Ուստամ-Զալի Ա., զլուխը միւս մասերի համեմատութեամբ  
աւելի մօտ է Շահ-Նամէին, բայց այստեղ ևս նկատում է այն  
մէծ տարրերութիւնը, որ ակնարկեցինք նախրնթագ պրակի մէջ:

Առաջին գլխի առաջին հատուածի (եր. 3) բովանդակութիւնը Աֆրասիաբի և Քաւզբաթի (Կաւ-Կոբաղ) մէջ ծագած պատերազմի սկզբնաւորութիւնն է. Քաւզբաթ յաղթուած, փախել է, երկիրը մնացել է թշնամու ձեռքը: Հենց այս սկզբնաւորութիւնն արդէն միանգամայն տարբեր է Շահ-Նամէից. Աֆրասիաբ արշաւել է Իրան այն ժամանակ, երբ մնուել է Իրանի վերջին թագաւորը Զէվ և երկիրը մնացել է անտէր: Կաւ-Կոբաղ

Ուստամձ-Զալի Ա. Գլխի երկրորդ պարբերութեան մէջ պատշաճութեան մուած է, թէ ինչպէս Զալը փորձում է Ռուսամի տղամարդութիւնը և ինչպէս վերջինս իւր համար ձի է ընտրում: Համեմատելով այս հատուածը Շահ-Նամէի համապատասխան մասերի հետ, պարզում է, թէ ժողովուրդը Շահ-Նամէից փոխ առած նիւթը որչափ ազատ կերպով նորից ստեղծել և ամբողջութիւն կավագել: Զրոյցի էական իմաստը երկու տեղն էլ նոյն է և այդ է կազմել: Զրոյցի էական իմաստը երկու տեղն էլ նոյն է և այդ է իսկապէս նոցա մէջ կած նմանութիւնը, բայց որքան տարբեր կերպով է պատմուած և ձեակերպուած այդ մի նոյն պատմուածինը երկու երկորի մէջ: Ժողովրդականը շատ պարզ է և նկաթիւնը ընդունելով մի քանի տողով, այն ինչ Շահ-Նամէի մէջ բազրուած ընդամենը մի քանի տողով, այն ինչ Շահ-Նամէի մէջ բազրուած երկորի անտէր է միացել և Աքրասիար մեծ զօրքով արշայել է իրան: Մեծամեծները հաւաքուել են Զալի շուրջը և հնարքեն ինդրում երկրի փրկութեան համար: Զալը յիշում է իւր երիտասարդական քաջութիւնները, բայց այժմ ծերութեան պատճառով թոյլ է և անզօր թշնամու դէմ մարտանելու: Սակայն մի նուրաբորոջ տա է բուսել նոյն արամատից և այդ ոստն Ռուսամի է, որ թէն մասնուկ, բայց նոնու բարձրութիւն ունի: Խոստանում է որդու համար զիդի զօրութիւն ունեցող մի ձի գանել և ներշնչել նորան իրանի մեծամեծների հետ թշնամու դէմ մարտնչելու: Այնուհետեւ մի երկար տրամախօսութիւն է սկսում հօր և որդու մէջ. Զալը մի կողմից որդու նորատի հասակն է յիշեցնում, միւս կողմից վառում թշնամու դէմ: Ռոստամ պատասխանում է նորան խիզախ խօսքերով. նա փափուկ կեանքի և գինու սիրահար չէ, այլ վրէժինդիր է կամենում լինել: Նա յոյս ունի, երբ լարի իւրագեղը, կատարձից ասողեր կ'թափուին, վազրի և ընձի կաշուց պահպանակ հապնելով, մահ կսփոր ամեն տեղ, իսկ ձին տիրոջ զարկն ու թերի զօրութիւնը տեսնելով՝ աներկիւլ կ'գառնայ Ռոստամ հօրից ըլուրի նման մի ձի է ուզում, լերան կտորի նման մի գուրզ, որով թուրանցիների գլուխը ջարգել և արեան գետեր հոսեցնել կարողանայ, ուզում է վազրի մորթուց պատրաստած մի զրահ, որ կրակից անվիսա մնայ և ջրից անթափանց իսկ նիզակն ու նեաը ծակել չ'կարողանան:

Այս ընդարձակ տրամախօսութեան հետևում է ձիու ընտրութեան նկարագրութիւնը: Ռոստամի առաջն են բերում Զաքարովի և Քաբուլի բոլոր երամակները. Նա մէկ մէկ իւր ձեռքը զնում է ձիերի մէջքին, բայց բոլորն էլ ճկում, փորերը գետնին են տալիս: Վերջապէս անցնում է մի մատակ և նրա յետեւց մի քուսակ, որի յատկութիւնները նկարագրուած են ընդարձակ կերպով. Տախչն է այդ քուսակը: Ռոստամը պարանը ձգում է նորա պարանոցը. մայրը վրայ է հասնում և կամենում է ատամներով պոկել Ռոստամի գլուխը, բայց գլխին բսունցք ստանալով, փուռում է գետին: Ռոստամը պինդ քաշում է քուսակին և նորա մէջքին սեղմում, բայց չի ճկում<sup>1)</sup>:

Այս համեմատութիւնից ընթերցողն ինքնին տեսնում է, թէ ժողովրդականն ինչպէս տարբեր է Շահ-Նամէից: Համեմատաբար աւելի նմանութիւն կարելի է գտնել ձիու ընտրութեան պատմութեան մէջ, բայց այդ նմանութիւնն էլ նորանով պէտք է բացատրել, որ Շահ-Նամէի այդ հատուածը բուն ժողովրդական առասպելի վրայ է հիմնուած: Հերոսների ձիու այդ տեսակ ընտրութեան եղանակը յատուկ է ժողովրդական վէպին. մեր Դաւիթն էլ նոյն ձևով է ընտրում իւր Քուռիկ-Զալալին<sup>2)</sup>: Դեռ կարող ենք ասել, թէ Ռուստամ-Զալին այդ կողմից աւելի մօտ է Սասմայ Ծուերին, քան Շահ-Նամէին: Վերջնիս մէջ պակասում է Թախշի ծովային ծագում ունենալը, այն ինչ այդ գիծը բուն ժողովրդական է<sup>3)</sup>. Պակասում է այնտեղ նաև ձին հրաշալի կերպով պայտելու պատմութիւնը (եր. 4—5):

Սյնուհեակ, եթէ առաջ տանենք մեր համեմատութիւնը, կը տեսնենք, որ Ծոստամ-Զալի մէջ փոխուած է նախ պատմութեան հետևզականութիւնը. Կաւ-Կոբադի երազն աւելի առաջ է պատմուած, քան Շահ-Նամէի մէջ, Կելունն ուզարկում է Իրանցիների դէմ Ալբորսից վերադառնալու ժամանակ. Անշուշտ ժողովրդականն ըստ էութեան յիշեցնում է ազգիւրը, բայց պատմուած է տարբեր ձևով և կապակցութեամբ: Բացի գորանից Ծոստամ-Զալի մէջ մտել են մի քանի այնպիսի գծեր և մանրամասնութիւններ, որ յատուկ են ժողովրդական վէպին: Զալի ուրախութիւնն ու հերոս որդու սպառագինութիւնը նկարագրուած է հակիրճ, բայց

<sup>1)</sup> ζωμένη μαστιθήνη πολιτική που διατηρείται από την πρώτη στιγμή της ιδιοτελείας της και παραμένει από την πρώτη στιγμή της ιδιοτελείας της.

<sup>2)</sup> Ասմալ Ծակը ել. 105—106.

<sup>3)</sup> Ушишвиль Фёдор Кр. 63—64; Буслаевъ. Исторические Очерки русской народ. словесности и Искусства. Т. I. Кр. 409.

կենդանի և վիպական բանաստեղծութեան ըսուր կատարելութեամբ։ Ռուսամի զինքերն ևս, ինչպէս մեր Դաւթինը, Զալ հանում է մակագից՝ հակառակ Շահ-Նամէի, ձիու զարդարանքը նման է Քուսիկ-Զալալու<sup>1</sup>) կամ Ասլան ազի Բոզ-Բէդաւու<sup>2)</sup> զարդարանքներին, պատուիրակութիւնը իւր կրկնութիւններով բուն ժողովրդական է։ Ռուսամ Ղէյլունի հետ պատերազմելուց առաջ, որ հերոսի առաջին պատերազմն է, ջուր է խմում աղբիւրից և ատա քիչ յետոյ «Ընցկուն լցուաւ, էնուր մազիր զրեխիէ շապիկն իտու տիւս», մի գիծ, որ նկատում ենք նաև մեր Դաւթի կեանքի մէջ<sup>3)</sup>։ Ռուսամի մենամարտութիւնը Ղէյլունի և նորա զօրքերի հետ տարբեր է Շահ-Նամէից։ Ռուսամ ևս, ինչպէս մեր Դաւթի, կենդանի մնացած երկու թշնամիների ատամները քաշում և ճակատներին է շարում, որ թագաւորին լուր տանեն<sup>4</sup>), այն ինչ Շահ-Նամէում արդարիսի բան չկայ:

6.

Ոստամ-Զալի Բ. զլուխը բազկացած է երկու մասից. առաջին մասը եր. 10—12 առնուած է Շահ-Նամէի Զոհրաբ վէպից, իսկ միացածը եր. 12—19 Բուրբոյ-Նամէից: Բայց ժողովուրդը երկու տարբեր գրքերից առնուած վէպերը միացըել և մի ամերութեան է կազմել, հետեւելով ծննդաբանական հետեւզականութեան:

Զոհը արի վէպը, որ Շահնամէի ամենից զեղեցիկ և ընդուղարձակ մասերից մէկն է, շատ համառօտ է և ցամաք Ռուսամ-Զալի մէջ. պարզ պէտք է լինէր հաւանորէն նաև Շահնամէի հիմք կազմող պարսից ժողովրդական առասպենիրի և աւանդութիւնների մէջ: Ժողովրդական վէպին յատուկ մի գիծ է հօր և որդու մենամարտութիւնը, որ հանդէս է գալիս շատ աղբերի վէպերի, մէջ այլ և այլ եզանակաւորութիւններով, բայց ոչ մի տեղ չենք տեսնում այն հոյակապ վեհութիւնն ու գրաւիչ գօշը բութիւնը, ինչպէս Ֆիրդուսու երկի մէջ: Յիշենք Ռուսաց իլիա Մուլտմոցու և Սոկոնիկի, կելտական Կլիվանորի և Կարտոնի, գերմանական Հիլդեբրանդի, Բիւզանդական Սաղբրոնիկոնի և իւր որմանական Հիլդեբրանդի, Վիւզանդական Սաղբրոնիկոնի և մեր կուրտ, վերջապէս մեր ազգային վէպի մէջ Դաւթի և Մհերի դու կուրտ, վերջապէս մեր ազգային վէպի մէջ Դաւթի և Մհերի մենամարտութիւնը: Այս վերոյիշեալ վէպերից ոչ մէկը հօր և

1) Ապսմայ ծուել ել 106.

<sup>2)</sup> Փշտանքներ ժողովրդ. բանահիւսութիւնից եր. 8.

3) Աասմայ Ծռեր ել. 109.

Ապամայ Ծռել եթ. 102.

որդու մենամարտութեան տեսակէտով համաշխարհային մատենագրութեան մէջ այնպէս նշանաւոր չէ հանդիսացել, ինչպէս Զոհրաբի վէպը, և այդ շնորհիւ մեծ բանաստեղծի տաղանդի, որ կարողացել է ժողովրդական պարզ նիւթից այնպիսի հոյակապ, գեղարուեստական կատարելութեամբ հիւսուած, ողբերգական-ձակատագրական մի վէպ ստեղծել: Սորանով ի հարկէ չենք կամենում ժխտել, թէ հէնց Ֆիրդուսու աղբիւրի մէջ կարող էր լինել այն ճակատագրական-ողբերգական տարը, որ եղբերգական վախճան է տալիս վէպին և այնպէս սրաշարժ դարձնում: Այս գիծը նկատելի է նաև ուրիշ աղբերի վէպերի մէջ, թէ առարքեր եղանակաւորութիւններով, օրինակ կելտական Կլիզամոր և Կարտոն վէպի մէջ: Այստեղ ևս, ինչպէս Շահ-Նամէի մէջ, որդին զգում է, որ ճակատակորդը կարող է իւր հայրը լինել և աշխատում է իմանալ նորա անունը, բայց ի զուր: Հայրը նոյնպէս ազատ չէ այն նախազգացումից, թէ որդու հետ է մենամարտում: Այստեղ ևս հայրը մօտ է յաղթուելու, ջարգուել է նորա նիզակը, յափշտակուած է սուրը, որդին պատրաստում է կապել հօրը, բայց վերջինս բաց տեղ նկատելով որդու կողքին, մահացու հարուած է տալիս: Մահուան վերջին բողէին միայն որդին յայտնում է իւր ով լինելը: Վշտարեկ հայրը խնարհում է որդու զիակի վրայ. երեք օր իւրայինների հետ սուր է պահում և վախճանում չորրորդ օրը, անկարող լինելով տանել այդ վեշաը<sup>1)</sup>: Միթք պակաս ճակատագրական տարը է կրում մեր Դաւիթ և Մհեր վէպը. թէպէտ հօր և որդու մենամարտութիւնը մահուամբ չէ վերջանում մեր վէպի մէջ, բայց ինչքան ճակատագրական-ողբերգական է Դաւիթի անէծքը. «անմախ ըլնիս, անժառանգ»: Բայց և այնպէս, կրկնում ենք, այս վէպերից ոչ մէկը չի համում Շահ-Նամէի Զոհրաբին, որովհետեւ ժողովրդական պարզ նիւթը բանաստեղծի տաղանդի շնորհիւ գեղարուեստական այլ կերպարանը է ստացել:

Այս բացարութիւնից յետոյ ճականալի պէտք է լինի, թէ ինչո՞ւ Ռոստամ—Զալի մէջ այնքան պարզ ու համառօտ է Զոհրաբի վէպը: Ժողովուրդը Շահ-Նամէի արուեստական մասը չէ իւրացըել, այլ ճաւատարիմ իւր վիպական աւանդութիւններին, վերաբարել է այն շատ անպահոյձ կերպար, յաճախ կրծատելով նոյն խել վիպական մասերը կամ շեղումներ կատարելով աղբիւրից: Ժողովրդականի մէջ չէ նկարագրուած Ռոստամի որսի գնալը

<sup>1)</sup> Илья́ Муромецъ и Богатырство Кievskoe Oresta Millera C. II. 1869, եր. 7—11.

և մի ամբողջ ցիո խորովել, ուտելը, քնելը, թուրանցիների բախշը փախցընելը, Ռոստամի Սիմենկան գնալը, թագաւորի ինչոյքը: Շահ-Նամէից տարբեր են նոյնիսկ Ռոստամի ամուսնութեան, Զոհրաբի ծննդեան և մնադեան պարագաները: Զոհրաբի երեխայութեան չարութիւնները, յիշեցնում են մեր Դաւիթի չարութիւնները, որ Շահ-Նամէում չկայ, ինչպէս և Զոհրաբի ամուսնութիւնն ու հրաժեշտի ժամանակ կնոջը «բաղրանգ» տալը: Այս վերջին երկու կէտերը գուցէ առնուած են Բուրգովնամէից: Ժողովրդականի մէջ կարգի առդի անմիջապէս իրբեւ ախոյեաններ կանգնում են իրար հայր և որդի անմիջապէս իրբեւ պաշարելը ու Հեղիրին բանելը, ոչ Գուրգափրիդի հետ ունեցած մենամարտութիւնն ու սիրահարութիւնը, շահի նամակն Ռոստամին, գժտութիւնն ու հաշտութիւնը երկուսի մէջ, Ռոստամի ծպտեալ կերպով թշնամութանակ մասնելը, Զոհրաբի հարց ու փորձը Հէջիրից Ռոստամի նշանների մասին և նորա նպատակաւոր սուս պատասխանները, Զոհրաբի մէջ յառաջ հեած նախազգացումը, թէ ախոյեանը իւր Զոհրաբի հայրն է և Ռոստամի խուսափողական պատասխանը, որով վէպն հետզհետէ աւելի և աւելի ողբերգական-ճակատագրական է գառնում: Ռոստամի սուսն էլ ժողովրդականի մէջ միանգամայն տարբեր է Շահ-Նամէից, թէ գարձեալ հօրը կերպով արտայայտուած սիր հայրն է և Ռոստամի խուսափողական պատասխանը իւրց յաւագութեան է ողբերգութիւնների խոցուած հօր ցաւն ու վիշաը: Միակ նմանութիւնն անունների վեցուած է և պատմութեան էութեան մէջ, այսինքն թէ որդին սպանուած է հօր ձեռքով:

Ռոստամ-Զալի Բ. վլխի մնացած մասը, այն է 12-19 եր., ինչպէս յիշեցնը, փոխառութիւն է Բուրգովնամէից:

Շահ-Նամէն Ֆիրդուսու տաղանդի շնորհիւ կարձ ժամանակի մէջ հեղինակութիւն է ստանում արեւելում, յատկապէս Պարսկական մէջ, և անազին գրականութեան առիթ գառնում: Սիր և Ցամկաց մէջ, և անազին գրականութեան լուղարձակ գիւցազներգութիւններ են Պարսկաց շատ բանաստեղծներ լուղարձակ գիւցազներգութիւններ են գրութիւննուղութեամբ, որոնց գործող անձինք առնուած կամ ցահացութիւն ունին Շահ-Նամէի հերոսների հետ: Այսպիսի վէպերից են Բուրգովնամէ, Մամ-Նամէ, Ֆիրամուրզ-Նամէ, Շահրիար-Նամէ, Զիհանգիր-Նամէ և այլն: Գիտնականներից ոմանը<sup>1)</sup>, մանաւանդ հները, հակուած են ընդունելու, թէ այս վէպերի նիւթը գարձեալ ժողովրդական է, հին աւանդութիւնների վրոյցների վերայ հիմնուած, այն ինչ նեոլորէէն<sup>2)</sup>, որ մեծ

<sup>1)</sup> Chack, Heldensagen von Firdusi, Berlin, 1865 Einleitung եր. 33:

<sup>2)</sup> Das Jranische Nationalepos, Strassburg, 1896.

հոչակ է վայելում Երրողայում արևելագիտութեան մէջ, բացարձակապէս այդ բոլորն էլ բանաստեղծների երեակայութեան արդիւնք է համարում կամ Շահնեամէի նմանողութիւն։ Բուրզոյն Նամէն, որ յիշեալ վէպերից լաւագոյնն է, գրուած է ԺԱ. Պարում. բովանդակութիւնը շատ նման է Շահնեամէի Զոհրաբ վէպին, այն տարբերութեամբ միայն, որ Բուրզոն չի սպանւում ոչ ֆարամուրզից և ոչ Խոստամից, որոնց հետ մենամարտում է նա։

Ժողովրդական վէպերի մէջ հօր և որդու մհնամարտութիւնը  
միշտ որդու մահով չէ վերջանում, այլ երբեմն յայտնուում է մե-  
նամարտողների ցեղակցութիւնը, և այնունեան կոփել համբոյր-  
ների և ուրախութիւնների է փոխուում: Օրեստ Միլլերը իւր ըն-  
դարձակ աշխատութեան <sup>2)</sup> մէջ ճգնուում է հաստատել այն միտքը,  
թէ հօր և որդու մէջ եղած կոփեներից մահուան վերջաւորութիւնը  
հնագոյնն է, իսկ հաշտութիւնն ու փոխադարձ քննոյշ արտայա-  
տութիւնները բարքերի մեղմութեան նշան, ուրեմն և համեմատա-  
բար աւելի ուշ ժամանակի արգիւնք: Խոսաց վէպերի մէջ երկու  
վերջաւորութիւններն էլ պատահուում են. Իլիա Մուրոմցու մէջ  
Սոկոլնիկը սպանուում է, այն ինչ Շահ-Նամէից փոխ առնուած  
Ուրուսլան Զալազարեվիչի մէջ հայրը ճանաչուում է որդուն իւր  
թողած գոհարով և հաշտութեամբ է վերջանուում: Միլլեր հնթա-  
գրուում է, որ գերմանական Հիլդերբանդ երգի մէջ զրուած լ.  
դաբում, բայց տարաբաղդաբար թերի հասած մեր ձեռքը, մե-  
նամարտողներից մէկի մահով պիտի վերջանար, այն ինչ ծՓ.  
և ԺԵ. դարերում զրուած վէպերի մէջ հաշտութեամբ է վեր-  
ջանուում: Մեր ազգային վէպի մէջ ևս Դաւթի և Մհերի մենա-  
մարտութիւնը մահուամբ չէ վերջանուում, թէպէտ հնութեան և  
բարքերի խստութեան զրոշմը մնացել է Դաւթի «անմախ իս,  
անժառանգ մնաս» անէծքի մէջ: Բուրգոյ-Նամէն նմանողութիւն  
լինելով Զոհար վէպին, այս խնդրում զանազանուում է նորանից,  
որ պահպանուած է նաև ժողովրդական Խոսամ-Զալի մէջ:

Բուրգոն Զոհրաբի սրբին է, որ ծնուած է գեղեցիկ Շահըուզից: Զոհրաբը Խրանի դէմ սկսած արշաւանքից առաջ սիրոյ յարաբերութիւն է սկսում Շահըուզի հետ և բաժանուելու ժամանակ մի մանեակ է թողնում նորան, որ կրում էր այնունեանի իւր կրծքի վերայ: Սիրոյ այս յարաբերութիւնից ծնուած է Բուրգոն, որին մայրը մինչև քսան տարեկան հասակը մեծացնում է անյատութեան մէջ, վախենալով, որ նա Զոհրաբի վրէցը կ'լուծի Ռուտամից: Ի վերջոյ Աֆրասիաբն ընդունում է նորան իւր պալատում

<sup>2)</sup> Илья Муромецъ *и шути*.

և ապա իրանի դէմ ուղարկում։ Բուրգոն գերի է ընկնում, յայտնվում է նորա ծագումը և այսուհետեւ բազմաթիւ արկածներ է ունենում, որոնց մասնակից են ՇահՆամէի հերոսներից շատերը։

Այս համառօտ բովանդակութիւնը, որ մենք քաղում սպ  
Շակի յիշեալ երկից<sup>1)</sup>, բաւական է տեսնել, որ Ոստամ-Զալի  
վերոյիշեալ մասը (եր. 12—19) փոխառութիւն է Բուրզոյ-Նամէից:  
Տարաբաղդաբար ձեռքի տակ չ'ունինք այդ վէպի թարգմանու-  
թիւնը, որպէս զի աւելի մանրամասն համեմատել և կախման  
չափը որոշել կարողանայինք:

7.

Ոռոտամ-Զալի Գ. վլուխը, վէպիս ամենագեղցիկ մասը, համապատասխան է Շահ-Նամէի Ոռոտամի որսորդութիւնը թուրանում հասուածձին: Սակայն ինչպէս նախընթաց գըշ լուխներում, այստեղ ևս ոչ միայն տարբերութիւններ կան, այլ ամբողջութիւնն հիւսուած է ազատ և համարեա անկախ Շահ-Նամէից: Նախ ամբողջութեան մէջ չի պահուած Շահ-Նամէի յաջորդականութիւնը, այնտեղ առաջ որսորդութեան տեսարանն է և ապա Զօհրաբի վէպը, իսկ այստեղ ընդհակառակն: Երկրորդ՝ տարբերութիւններ կան նաև բովանդակութեան նկատմամբ, Շահ-Նամէի մէջ պակասուամ են թուրանի թագաւորի հարց ու փորձը վեզիրներին, Գեկի շահաստակութիւնները, Ոռոտամի ուտիկուց յեւ անփոյթ կերպով քնելը, Ֆիլասըմին սպանելը: Բայ Շահ-Նամէի Պիլսեմ (Ֆիլասը), Փիրանի եղբայրն, սպանուամ է ոչ այստեղ, այլ շատ յետոյ, երբ իրանցիք Սիափուշի արեան վրէժն են առնուամ թուրանցիններից: Ալկուսի պատմութիւնը ձուլուել է Ֆիլասըմի պատմութեան հետ: Երկրորդական տարբերութիւնները լասըմի պատմութեան տալով, յիշենք նաև, որ Շահ-Նամէի մէջ չկայ ոչ զանցառութեան տալով, յիշենք նաև, որ Շահ-Նամէի մէջ չկայ ոչ գիել և Ֆիլասըմի մենամարտութիւնը և ոչ Հըմանի պատմութիւնը: Հերոսների պայքարը Ոռոտամ-Զալի մէջ նկարագրուած է ինք: Հերոսների պայքարը (Յոսուական) այս պատմութեան և ժողովրդական: Կաւ-Խոսրովը (Քաւ-Խոսիր) այս պատմութեան մասնակից չէ, այն ինչ Ոռոտամ-Զալի մէջ պատերազմը նորա մասնակցութեամբ է վերջանուած: Ոռոտամ-Զալի պատմութեանը կամ Յեռվանը կամ նորա վարպետը Կաւ-Խոսրով անունը շփոթել է Կաւ-Կատուս անուան հետ:

8

**ԶՈՐՅԱՐԴ** զլուխը Սիավուշի և Սուղարէի սիրահարական ար-

<sup>1)</sup> Einleitung, *kp.* 33. σωματοθεούσιον.

կածների, Սիավուշի մահուան և նորա որդու կառ Խոսրովի ազատութեան և թագաւորութեան, Շահնամէի երեք մեծ վէպերի, ազգեցութեան արձագանքն է. արձագանք ենք անուանում, որովհետեւ ժողովրդական վերաբարպութիւնը միանգամայն տարբեր կազմութիւն ունի, քան Շահնամէի համապատասխան մասերը: Սիավուշի մօր (Սուգարէի) սիրահարութեան պայմանները, Սիավուշի թուրանում բնակութիւն հաստատելու, ինչպէս և նորա սպանութեան պատմութիւնը, Գեի հանդիպումը Քեաւխարի (Կաւենուրովի) հետ ոչ մի նմանութիւն չունին Շահնամէի հետ: Սիավուշի բանսարկուն ըստ Շահնամէի ոչ թէ Հմանն է, որ Մոստամշալի մէջ երեսում է որպէս չարութեան տիպար, հակառակ բարի և իմաստուն Փիրանին, այլ Սփրասիարի եղբայր Գիրսիվէս: Հըմանը Շահնամէի մէջ մի համակլենի հերոս է և հանդէս է զալիս միայն Սիավուշի վրէմբը լուծելու համար ծագած պատերազմի մէջ, եթէ չյիշենք նորա չնչին գերը Զոհրաբի վէպում:

Ի՞նչ որ ասել ենք Զոհրաբի վէպի մասին, նոյնը կարող ենք կրկնել նաև Շահնամէի այս երեք՝ բովանդակութեամբ միմեանց հետ կապուած և մի ամբողջութիւն կազմող վէպերի մասին: Այստեղ ևս, ինչպէս և Զոհրաբի վէպի մէջ, բանսատեղծի տաղանդը կարողացել է ձեռքի տակ եղած պարզ նիւթից այնպիսի մի հրաշալի գործ ստեղծել, որի նմանը գժուար է գտնել ուրիշ ազգերի ժողովրդական, վիպակն բանսատեղծութեան մէջ: Սիավուշի բաղզը կապուած է մի ճակատագրական օրհասի հետ դեռ ևս ծնուելուց առաջ. Գոգարզ և Թոււս պատրաստ են իրար խողխողել նորա մօր համար, մանուկը մնում է հայրենական տնից գուրս Մոստամի իմամատարութեան տակ, հազիւ պատանեկութեան հասակին. հասած՝ Սուգարէի՝ խորթ մօր, սիրոյ թակարգները լարւում են նորա գէմ: Բայց մաքրութիւնն ու առաքինութիւնը յարթող են հանդիսանում յանձին Սիավուշի: Զարմանալի վարպետութեամբ բանսատեղծը նկարագրել է սիրուց տոչորուղ Սուգարէի մտորմունքներն ու զգացմունքները, հնարագիտութիւնն ու խորամանկութիւնները, միենոյն ժամանակ բաւական կրքի չարութիւնը: Հազիւ պատուած օրհասի րիբած այս վտանգից, աւելի ծանր փորձութիւն է գալիս նորա զլիքն. նա ստիպուած է թողնել փառք, հայրենիք, ծնող, և բնակուիլ թուրանում, Սփրասիարի հետ կապած ուխտին հաւատարիմ մնալով: Առ ժամանակ կարծես բարձես բաղզը ժպտում է հերոսին. նա երջանիկ է իւր ամուսնութեամբ, կեանքի վայելքները շրջապատում են նորան, բայց օրհասի ամպերը աւելի և աւելի կուտակում են հերոսի զլիքն և վտանգաւոր դատնում: Սփրասիարի

եղբայրը՝ Գերսիվէս, որ չարութեան մի տիպ է, կարողանում է վերջ ի վերջոյ համոզել թագաւորին, որ Սիավուշ սպանուի: Այս բոլոր գէպերը նկարագրուած են վերին աստիճանի կենդանի և բոլոր գէպերը իւր հոգու բոլոր զօրութեամբ հազրաւիչ կերպով. ընթերցողը իւր հոգու բոլոր զօրութեամբ հազրաւած է բարի, ազնիւ և առաքինի Սիավուշի կողմը և թախծուկուած է բարի, ազնիւ և առաքինի Սիավուշի կողմը և թախծուկուած է բարի, ազնիւ և առաքինի Սիավուշի կողմը և ամուսնուկ, որ օրհասն այնպէս անողոք կերպով հալածում է նորան:

Թոստամ-Զալի մէջ այս կաշկանդող զօրութիւնը չենք տեսնում, և սխալ կլինէր սպասել, որ ժողովուրդը հոգեբանական այնպիսի մանրամասութիւններ և զգացմունքների վերլուծութիւններ անէր, ինչպէս Ֆիրդուսին իւր վէպի մէջ: Ոչ Սիավուշի, ոչ Սուգարէի, ոչ Դերսիվէսի և ոչ միւս անձանց գէմքերը ժողովը կապուած է բարսիվէսի և ոչ միւս անձանց գէմքերը ժողովը: Ժողովրդական վէպին յատուկ չէ մանարել է այդ բանսատեղծը: Ժողովրդական վէպին յատուկ չէ մանարել է այդ բանսատեղծը: Ժողովութիւնը կերպով կը բաղուել հերոսների հոգեկան աշխարհով, թէն բազմների հոգեկան աշխարհով, այս ժողովութիւնը միշտ պահպանուած ենք տեսնում նորան մէջ: Այստեղ հերոսների բնոյթը որոշում է միայն ընդհանուր բազերով, զուտ առարկայական կերպով, այսինքն նոցա գործողութիւնը կերպով: Բնականաբար ժողովուրդը շեղուել է աղբիւրից և թիւներով: Բնականաբար ժողովուրդը շեղուել է այս հայ-հատելով իւր բանսատեղծական-վիպական բնազդին՝ իւր հայ-հացքների համեմատ ձևակերպութիւն է տուել պատմութեան: Ամբողջ գլխի մէջ միայն առաջին և վերջին երկու հատուածներն են, որ յիշեցնում են փոքր ի շատէ բնազդիրը, մնացած մասը՝ այն է Սիավուշի մանկութեան նկարագրութիւնը, որի մասը տեսարանը, Սիավուշի և անհաւատարիմ մօր մէջ պատահնալու արկածը, վերջնիս խորամանկ դիմակաւորութիւնն ու ամուսնուն զրգուել որդու գէմ, թագաւորի պատուէրը որդուն սպանեանու Սիավուշի հագուստը շատ արեան մէջ թաթախելը, միանգալու, Սիավուշի հագուստը շատ արեան մէջ փոխենք անունները, այլ վէպին յատուկ գծերով: Այս մասի մէջ փոխենք անունները, այլ վէպին յատուկ գծերով: Այս մասի մէջ փոխենք անունները, այլ վէպին յատուկ գծերով: Այս մասի մէջ փոխենք անունները, որոնք կարծեն նաև անհաւատած մեր ազգային վէպից<sup>1)</sup> և յատուկ են ոչ միայն փոխի են առնուած մեր ազգային վէպից և յատուկ են ոչ միայն փոխին: Հոգեբանորէն ևս անհաւատարիմ Սուգարէի (անունը մեր վէպին: Հոգեբանորէն ևս անհաւատարիմ Սուգարէի լուսաւութիւնն ու գիմակաւորութիւնը նախ աչ յիշուած) խորամանկութիւնն ու գիմակաւորութիւնը նախ ամուսնուն խարելու և ապա որդու գէմ զրգուելու մէջ, Սիավուշի մուսում մեր վէպին: Հոգեբանորէն ևս անհաւատարիմ Սուգարէի անունը մեր վէպին: Հոգեբանորէն ևս անհաւատարիմ Սուգարէի լուսաւութիւնն ու գրաբուրը լուսաւութիւնը արտայայտուած է

<sup>1)</sup> Սասմայ Ծռեր. եր. 89.

միանգամայն ձիշու: Սուղաբէի դերը կատարող կնոջ բնոյթը օտար ազգերի վէպերի կամ աւանդութիւնների մէջ ևս նկարագրուած ենք տեսնում մօտաւոր նմանութեամբ:

9.

Հինգերորդ և վեցերորդ գլուխների առնչութիւնը Շահ-Նամէի հետ այնպէս որոշ չէ, ինչպէս նախընթաց գլուխներինը տեսանք: Նմանութիւնը հետաւոր է, այն էլ որոշ վէպերի վերաբերութեամբ միայն, ինչպէս օրինակ Խոստամի թուրան նուաճելը ու այնտեղ թագաւորելը: Սակայն հաւանական է, որ այս գլուխների բովանդակութիւնը Շահ-Նամէի ազգեցութեամբ յառաջ չի եկել: Հինգերորդ գլուխը, բացառութեամբ վերջարանի, նման է պ. Բագրատ Խալաթեանի հրատարակած «Խոստամ»<sup>2)</sup> վերնագրով հատուածին, որ գրի է առել Վանայ նահանգի Զիրուխու գիւղի բնակիչ Վարդան Գալուստեանից: Այս երեսյթը մի ապացոյց է, որ մեր հատուածը ծանօթ է ժողովրդին նաև Մոկաց շրջանից գուրա: բարբառին նայելով՝ Զիրուխուն Մոկաց երկրում չպէտք է գտնուի: Եթէ Շահ-Նամէն չէ այս գլուխների աղբիւրը, յամենայն գէպս ծագումով պարսկական են նորա, որովհետեւ գործող հերոսները Շահ-Նամէի յայտնի հերոսներն են և պայքարը դարձեալ իրանի և Թուրանի շուրջն է պատուած: Բ. գլխի վերածութեան ժամանակ արդէն տեսանք, թէ ինչպէս Ֆիրզուսու հետեղութեամբ Պարսից մէջ մի ամրող գիւցաղներական դրականութիւն է ծաղկել և նոցանից մէկից՝ Բուրզոյ-Նամէից փոխ էր առնուած Խոստամ-Զալի մի մեծ հատուած (եր. 12—19): Անհաւանական չէ, որ ե. և Զ. գլուխները, ինչպէս և պ. Խալաթեանի հրատարակած հատուածներից մի քանիւր փոխառութիւն լինին վերցիշեալ գիւցաղներութիւնը կապութիւնը, արարագարար հարաւորութիւն չ'ունինք որոշ շելու, թէ ո՞րը որտեղից:

10.

Խոստամ-Զալի և Շահ-Նամէի բովանդակութեան համեմատութիւնը պարզում է մի երեսյթ, որ շատ խրատական է ժողովրդական բանահիւսութեան ուսումնասիրութեան նկատմամբ: Խոստամ-Զալի ծագման հիմքն է կազմում այն վէպը, որի սկզբնաւորութիւնը կապութիւնը կապուած է արիական ազգերի ընդհանուր հայրենիքի հետ, հերոսներից մի քանիւր յիշուած են նաև Հնդկաց Բիդ-Պ. հ-

<sup>2)</sup> Իրանի հերոսները ար. եր. 45.

դայի մէջ, և որ գոյութիւն ուներ Պարսկաստանում 660—583 թ. Ք. ա. ծագած Զենդ-Աւեստայից էլ առաջ: Պարսից գիւցաղներգութիւնը ամենասերտ կերպով կապուած է եղել պարագաւական կը-րօնի հետ և բազգակից նորա պատմութեան: Աքեմենեան հարստութեան աշխարհակալութեան հետ տարածուել է Առաջաւոր Ասիայում, կանգ առել Աղէբսանդը մեծի արշաւանքներով և մասսամբ Պարթեաց տիրապետութեամբ, վերակենդանացել Սասանան պետութեան և զրագաւական կրօնի վերածնութեան հետ: Ապա գրի է առնուել ե. Զ. և է. Պարերում պահլաւիկ լեզուով, արաբէն թարգմանելուց յետոյ, որից քաղուածներ են մասցել արարագաւաճների մէջ, բանաստեղծական մշակութեան է ենթարկուել Փ. գարում՝ մասամբ Խազիկի և ապա ամրողութեամբ Ֆիրզուսի բանաստեղծների ձեռքով և ընդհանուր աշխարհին յայտնի գարձել Շահ-Նամէ անունով<sup>1)</sup>: Ահա այս հազարաւոր տարիների պատմութիւն ունեցող վէպը այսօր հայ ժողովրդի անդիր բանահիւսութեան մասն է կազմում և նորա մտաւոր պաշարի մի օղակը: Խոստամ-Զալը բազմազան վարիանաներով և բարբառներով տարածուած է մեր ժողովրդի մէջ, որոնց գրի առնելն ու բանասէր հասարակութեան մատչելի գարձնելը կարևոր ծառայութիւն կը-լինէր մեր բանահիւսութեան ուսումնասիրութեան համար և գուցէ կ'լուսաւորէր նորա պատմութեան շատ մութ էջեր: Ահա փոխառութիւն մի գէպք, որի սկզբնաւութեան մենք հետեւել կարող ենք, բայց որքան հէքիաթներ, երգեր, առակներ և բանահիւսութեան միւս տեսակներին պատկանող երեսյթներ ունինք, որոնք փոխառութիւն են կամ փոխարձ ազգեցութեամբ յառաջ եկած, բայց գետ բացատրուած կամ համեմատութեան ենթարկուած չեն:

11.

Խոստամ-Զալի, Շահ-Նամէի և նման գիւցաղներգութիւնների առնչութիւնը պարզեցուց յետոյ, մեղ կ'մնայ չորրորդ պրակում աշրած տեսութիւնը փոքր ինչ աւելի մանրաւանել և ցոյց տալ այս վէպի արժեքը մեր բանահիւսութեան պատմութեան համար, ակնարկելով նաև համեմատութեան ժամանակ արած նկատութիւնները:

